

փաքեալդ ես եւ ներընդունակ եղեալ՝ մի՛ եւս այդ-
 քան զբազեցելս, այլ զի կատարեալն Աստուած է
 միայն եւ կատարելութիւն նմա վայելէ եւ ոչ մեզ
 մսեղինաց, որ ի հակակայից երկուց իրաց ունիմք ըզ-
 գոյացութիւն: Եթէ դօքօք զբօսնուցուս՝ մխիթարանս
 քեզ բաւական: Զ. զի թէ ըստ Աստուծոյ ոչ ոք հա-
 ճոյացաւ Աստուծոյ իմաստութեամբ, Աթենացիք զի
 թէ բարբարոս զամենայն ազգ համարիցիմք, եւ միայն
 զԱթենացիս հաշուել Փիլիսոփայս՝ հազարապետն խոր-
 հըրդոցն Աստուծոյ յոչինչս համարի եւ յիմարն Աստու-
 ծոյ իմաստնագոյն է՝ ասէ: Է. զի զայրաթ իմն ջատա-
 գովութիւն Հայոց ի մէջ բերել փութասցես, զայդքան
 զոր դու ծրարեալ ունիս ստացեալ, լինէր թէ դպրա-
 տուն դասատուն իմն բանաւոր բանն ընթանայր յա-
 ռաջ արդեամբք՝ երանի էր: Ը. զի որ ի մէնջ պա-
 հանջեցեր ի մէջ զբաղանաց գօլով, եւ անկէզն է
 փասլանմիշ լեալ, զի ոչ ոք խնդրող եւ սիրող եւ հար-
 ցող եղեւ: Թ. այդքան զոր մեզ ծանուցեր եւ աշ-
 խատանս կրեցեր, հարկ էր եւ հարկ է ի վարդապե-
 տէն յայնմանէ լցուցանել զիղձ քո եւ ի կատարումն
 ածել զոր ի մէնջ պահանջեսդ: Ժ. զի նշանագծիւ որ
 զԼատինաց լեզուաց եւ տառից մեզ ցուցեր, որք յայտ
 էին քան զՀելլենացւոցս, ահա՛ անհունք յառաջնոցն
 այնք որ ուսան յուսօղացն՝ ոչ հաւանին ուսուցողացն.
 յայտ է զի գերագոյնք են քան զառաջինսն եւ քան
 զուսուցողս իւրեանց: Եւ ինձ շատ է թէքլիֆդ հայոյ
 միոյ հոռոմոյ գերագոյն լինիլ քան զՅոյնս, գերա-
 զանց եւ գերագոյն լինիլ քան զԼատինացիս: Եւ զի
 ըստ զչորրորդում առարկութեանց պատճառաց ըստ
 խնդրոյդ և ըստ նրբագոյն մտացդ եւ մատաղութեան
 հասակիդ և ըստ անզբաղութենէդ եւ ըստ տեղեկու-
 թեանդ լեզուաց աշխարհայնոյդ՝ ի Լատինացւոց որոց
 տեղեկացեալ ես՝ գոն ի Ղալաթիա լցուցանել զբաղ-